

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

Պետության կարիքների համար մասնագիտական կողմնորոշման
ծառայությունների մատուցման պետական գնման № ՀՀ ԷՆ ԲԸԾՁԲ-15/02-203-15
պայմանագիր

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ № 02/16

Եվրամիության և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական
կանոնակարգման ոլորտի ոչ պարենային արտադրանքի գործող 4
տեխնիկական կանոնակարգերի ուսումնասիրության

Rev.02

Փետրվար 2016

Երևան

Կատարող՝

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ



ATMS Solutions

ՀՀ, Երևան, 0010, Վ. Սարգսյան 26/3,
Գրասենյակ 713
Հեռ.՝ +37410 583643
Բջջ.՝ +47491 497128
Էլ.փոստ՝ info@atms.am
Կայք՝ www.atms.am



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ներածություն	3
2.	Ցածր լարման էլեկտրասարքավորման անվտանգության ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծությունը, առաջարկությունները և եզրակացությունը	4
2.1	Համեմատական վերլուծության արդյունքները	4
2.2	Եզրակացություններ	7
2.3	Առաջարկություններ	7
3.	Վառելիքին ներկայացվող պահանջների ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծությունը, առաջարկությունները և եզրակացությունը	8
3.1	Համեմատական վերլուծության արդյունքները	8
3.2	Եզրակացություններ	11
3.3	Առաջարկություններ	12
4.	Ծխախոտային արտադրանքի ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծությունը, առաջարկությունները և եզրակացությունը	12
4.1	Համեմատական վերլուծության արդյունքները	12
4.2	Եզրակացություններ	15
4.3	Առաջարկություններ	16
5.	Մեքենա-մեխանիզմների անվտանգության ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծությունը, առաջարկությունները և եզրակացությունը	17
5.1	Համեմատական վերլուծության արդյունքները	17
5.2	Մեքենա-մեխանիզմների անվտանգության ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծության արդյունքները	17
5.3	Եզրակացություններ	22
5.4	Առաջարկություններ	23

1. Ներածություն

- 1.1 Սույն հաշվետվությունը մշակված է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և "ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող) միջև 2015 թ.-ի դեկտեմբերի 18-ին կնքված Պետության կարիքների համար մասնագիտական կողմնորոշման ծառայությունների մատուցման պետական գնման № ՀՀ ԷՆ ԲԸԾՁԲ-15/02-203-15 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում:
- 1.2 Սույն հաշվետվությունում ներկայացված են Եվրամիության (ԵՄ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգման ոլորտի ոչ պարենային արտադրանքի գործող 4 տեխնիկական կանոնակարգերի ("О безопасности низковольтного оборудования", "О требованиях к автомобильному и авиационному бензину", "О безопасности машин и оборудования" և "Технический регламент на табачную продукцию" տեխնիկական կանոնակարգեր) պահանջների համեմատական վերլուծության արդյունքները:
- 1.3 Ուսումնասիրությունը կատարվել է համաձայն Պայմանագրի տեխնիկական բնութագրում սահմանված հետևյալ պահանջների.
 - 1) Անվտանգության պահանջների համեմատություն.
 - 2) Անվտանգության ցուցանիշների համեմատության արդյունքում՝ առկա և բացակա ցուցանիշների վերլուծություն.
 - 3) Նույնական և տարբեր պահանջների դուրս բերում.
 - 4) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերում համապատասխանության գնահատման սխեմաների համադրում ԵՄ-ի նմանատիպ ակտերում գնահատման ընթացակարգերի հետ՝ ԱՀԿ ԱՏԽ համաձայնագրի ներքո:
 - 5) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերում մակնշման պահանջների համադրում ԵՄ-ի նմանատիպ ակտերում մակնշման պահանջների հետ:
- 1.4 Սույն հաշվետվությունում ընդգրկված են՝ Ցածր լարման էլեկտրասարքավորման և մեքենաների անվտանգությանը, վառելիքին և ծխախոտային արտադրանքին ներկայացվող պահանջների ԵՄ հրահանգների և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի ուսումնասիրության արդյունքները: Վերլուծության արդյունքում կազմվել են առաջարկություններ և եզրակացություններ, որոնք ներկայացված են սույն հաշվետվության 2-5 գլուխներում:
- 1.5 Նշված երկու փաստաթղթերի տեսակները համադրելի են: ԵՄ տարածքում հրահանգները ունեն նույն նշանակությունը ինչպես որ տեխնիկական կանոնակարգերը ԵԱՏՄ տարածքում: Միակ տարբերությունը այն է, որ ԵՄ-ում հրահանգների պահանջները պետք է ներառվեն ԵՄ անդամ պետությունների ազգային օրենսդրության մեջ, իսկ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը ունեն ուղիղ կիրառում ինչպես որ ԵՄ կանոնակարգերը:

2. Ցածր լարման էլեկտրասարքավորման անվտանգության ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծությունը, առաջարկությունները և եզրակացությունը

2.1 Համեմատական վերլուծության արդյունքները

2.1.1 Ցածր լարման էլեկտրասարքավորումների անվտանգությանը առնչվող ԵՄ հրահանգի և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի մանրամասն ուսումնասիրության ու համեմատության արդյունքները ներկայացված են համեմատական աղյուսակի տեսքով՝ սույն հաշվետվության հավելված 1-ում:

2.1.2 Ինչպես ԵՄ այնպես էլ ԵԱՏՄ փաստաթղթում ամրագրված պահանջները տարածվում են միևնույն լարում ունեցող էլեկտրասարքերի վրա. 50-ից 1000 Վ փոփոխական և 75-ից 1500 Վ հաստատուն հոսանքի համար:

2.1.3 Երկու փաստաթղթերում սահմանված պահանջները նպատակ ունեն ապահովել մարդկանց կյանքի, առողջության և ունեցվածքի պաշտպանությունը: ԵՄ հրահանգը նշում է նաև կենդանիների պաշտպանությունը: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նպատակի մեջ նշվում է սպառողներին մոլորության մեջ գցող գործողություններից նախազգուշացումը:

2.1.4 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերը կիրառման ոլորտից դուրս են բերում գրեթե նույն էլեկտրասարքավորանքը: Ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ԵՄ հրահանգում կիրառման ոլորտից հանված են նաև՝ ճառագայթման նպատակով կիրառվող սարքերը, հոսանքի հաշվիչները, կենցաղային օգտագործման վարդակները և խրոցները, ռադիո-էլեկտրական խանգարումների համար կիրառվող սարքերը, ինչպես նաև հատուկ պատվերով պատրաստված գնահատման սարքերը, որոնք նախատեսված են մասնագետների կողմից հետազոտությունների և նորարական սարքավորման վրա կիրառելու համար: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը կիրառման ոլորտից հանում է նաև ատոմային կայանների անվտանգության համակարգերում կիրառվող և ռազմական նշանակության էլեկտրասարքավորումը: Համեմատության արդյունքում ի հայտ է եկել, որ ԵՄ հրահանգը ավելի շատ տեսակի էլեկտրասարքավորում է դուրս բերել ցածր լարման հրահանգի կիրառման ոլորտից, դրանով իսկ հնարավորություն տալով առանձին կանոնակարգել հատուկ նշանակության էլեկտրասարքավորումը:

2.1.5 ԵՄ հրահանգի համաձայն շուկա կարող է մուտք գործել միայն ԵՄ-ում գործող ինժեներական փորձին և անվտանգության պայմաններին համապատասխանող սարքավորումը: Շուկայահանման համար նախատեսված արտադրանքը չպետք է վտանգ ներկայացնի մարդկանց և կենդանիների անվտանգությանն ու առողջությանը կամ գույքին: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում նշված է, որ միության տարածքում թույլատրվում է շուկայահանել տվյալ տեխնիկական կանոնակարգին համապատասխանող և համապատասխանության հավաստում անցած արտադրանքը: Ավելին, համաձայն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի արգելվում է միասնական նշանով մակնշել համապատասխանության հավաստում չանցած արտադրանքը և հետևաբար նաև շուկայահանել այն: Կարելի է փաստել, որ ԵԱՏՄ շուկայահանման պահանջները առավել կոնկրետ և թիրախային են:

- 2.1.6 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում անվտանգության պահանջները գրեթե նույնական են:
- 2.1.7 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է ազատ տեղաշարժին վերաբերող պահանջը:
- 2.1.8 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է էլեկտրամատակարարմանը վերաբերող պահանջը:
- 2.1.9 Ի տարբերություն ԵՄ հրահանգի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է տնտեսվարող սուբյեկտի պարտավորություններին առանձին բաժին: ԵՄ հրահանգում առանձնացված են արտադրողի, ներմուծողի, դիստրիբյուտորի և լիազոր ներկայացուցչի պարտավորությունները: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում են միայն դիստրիբյուտորին առնչվող պարտականությունները: Համաձայն ԵՄ հրահանգի համապատասխանության գնահատումը հանդիսանում է արտադրողի կամ դրա լիազոր ներկայացուցչի պարտականությունը: Համապատասխանության գնահատման արդյունքների հիման վրա արտադրողը պետք է կազմի ԵՄ համապատասխանության հայտարարագիր՝ կցեկով CE մակնշումը:
- 2.1.10 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է տնտեսվարողին նույնականացնելուն վերաբերող պահանջ:
- 2.1.11 Ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ԵՄ հրահանգը չի սահմանափակվում միայն միության մակարդակով համաձայնեցված ստանդարտներով, այլ նաև հնարավորություն է տալիս արտադրողին համապատասխանությունը սահմանված պահանջներին ապահովել նաև միջազգային ստանդարտներով այն պարագայում երբ բացակայում են համապատասխան ներդաշնակեցված ստանդարտներ, ինչպես նաև ազգային ստանդարտներով, եթե առկա չեն ներդաշնակեցված և միջազգային ստանդարտներ:
- 2.1.12 Համապատասխանության գնահատման համակարգերը, որոնք կիրառվել են ցածր լարման էլեկտրասարքերի կանոնակարգման նպատակով էականորեն տարբերվում են ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում: ԵՄ հրահանգը որդեգրել է պարզեցված մոտեցում պահանջելով միայն համապատասխանության հայտարարագիր և CE նշան համաձայն ԵՄ-ում գործող համապատասխանության գնահատման ամենապարզ Ա մոդուլի: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը նախատեսում է համապատասխանության գնահատման տիպային սխեմաների կիրառմամբ մի քանի մոտեցում, մասնավորապես ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը ենթադրում է համապատասխանության հավաստման ենթակա էլեկտրասարքավորման ցանկ: Այն էլեկտրասարքավորումը, որը ներառված է այդ ցանկում ենթակա է սերտիֆիկացման՝ 1ս, 3ս և 4ս սխեմաներով, մյուս բոլոր էլեկտրասարքավորման համար համապատասխանության հայտարարագրում է նախատեսվում 1դ, 2դ, 3դ, 4դ, և 6դ սխեմաներով: ԵՄ հրահանգով սերտիֆիկացիա նախատեսված չէ:
- 2.1.13 ԵԱՏՄ և ԵՄ փաստաթղթերում առկա է պահանջ պահպանել էլեկտրասարքավորման առնչվող փաստաթղթերը 10 տարի, սակայն ԵՄ հրահանգում նշվում է այդ ժամանակի որպես մեկնարկային կետ էլեկտրասարքավորման շուկա մուտք գործելը, իսկ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում այդ ժամկետի հաշվարկը մեկնարկում է էլեկտրասարքավորման արտադրությունից դուրս հանումը կամ էլեկտրասարքավորման վերջին միավորի իրացումից

հետո: Այսպիսով ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգով փաստաթղթերի պահպանման համար նախատեսված է ավելի երկար ժամկետ:

- 2.1.14 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի 7 հոդվածի 11-րդ կետում նշված է փաստաթղթերի փաթեթի մասին, սակայն չի նշված թե ինչ է ներառվում այդ փաթեթում: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր սխեմայի մեջ բերված է փաստաթղթերի փաթեթի համառոտ նկարագիր: ԵՄ հրահանգի Հավելված 3-ի 2-րդ կետում բերված է տեխնիկական փաստաթղթերի փաթեթի կազմը:
- 2.1.15 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանում է համապատասխանության հայտարարագրի գրանցման պահանջ, որից հետո միայն այն մտնում է ուժի մեջ: Նմանատիպ գրանցման պահանջ բացակայում է ԵՄ հրահանգում: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանում է 5 տարի, որպես համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետ՝ սերիական արտադրության համար, իսկ խմբաքանակի պարագայում անժամկետ: ԵՄ հրահանգը ժամանակային սահմանափակումներ չի նշում և նախատեսում է, որ համապատասխանության հայտարարագիրը պետք է պարբերաբար թարմացվի արտադրողի կողմից: ԵՄ հրահանգում բերված է համապատասխանության հայտարարագրի օրինակելի ձևը: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում նշվում է, որ օրինակելի ձևը հաստատվում է Հանձնաժողովի կողմից:
- 2.1.16 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում միասնական նշանին ներկայացվող պահանջները գրեթե նույնական են:
- 2.1.17 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում են շուկայի վերահսկողությանը ներկայացվող պահանջները:
- 2.1.18 Ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի, որտեղ միայն նշված է այն միջոցառումները, որոնք անդամ պետությունները պետք է ձեռնարկեն սահմանված պահանջներին չհամապատասխանող արտադրանքի նկատմամբ, ԵՄ հրահանգը մանրամասն նկարագրում է ինչպես Եվրոպական հանձնաժողովի, այնպես էլ անդամ պետությունների ու տնտեսվարողների գործողությունները:
- 2.1.19 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է միջոցառումների նկարագիր այն իրավիճակի համար, երբ շուկայահանված, սահմանված պահանջներին համապատասխանող էլեկտրասարքավորումը վտանգ է ներկայացնում մարդկանց և կենդանիների առողջությանը:
- 2.1.20 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է անհամապատասխանությունների օրինակները, որոնց բացահայտման դեպքում անդամ պետությունները պետք է պահանջեն տնտեսվարողից ձեռնարկել քայլեր՝ դրանց վերացման համար:
- 2.1.21 ԵՄ հրահանգում նախատեսված է պատժամիջոցների սահմանում այն տնտեսվարողների համար, որոնք կխախտեն հրահանգում սահմանված պահանջները: Լուրջ խախտումների համար նախատեսված է քրեական պատասխանատվություն: ԵԱՏՄ տեխնիկական հրահանգում պատժամիջոցների սահմանում նախատեսված չէ:

2.2 Եզրակացություններ

Ցածր լարման էլեկտրասարքավորումների անվտանգությանը առնչվող ԵՄ հրահանգի և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտը և անվտանգության պահանջները, գրեթե նույնական են: Միևնույն ժամանակ համապատասխանության գնահատման համակարգերը, որոնք կիրառվել են ցածր լարման էլեկտրասարքերի կանոնակարգման նպատակով էականորեն տարբերվում են: ԵՄ հրահանգում բերված է ԵՄ-ում գործող համապատասխանության գնահատման ամենապարզ Ա մոդուլը, որը պահանջում է միայն համապատասխանության հայտարարագիր և CE նշանի կիրառում: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը նախատեսում է համապատասխանության հավաստման ենթակա էլեկտրասարքավորման ցանկ: Այն էլեկտրասարքավորումը, որը ներառված է այդ ցանկում ենթակա է սերտիֆիկացման, մյուս բոլոր էլեկտրասարքավորման համար համապատասխանության հայտարարագրում է նախատեսվում: Բացի այդ, ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի համապատասխանության հայտարարագրի գրանցման պահանջը, դիտվում է որպես առևտրի տեխնիկական խոչընդոտ: Միասնական նշանին ներկայացվող պահանջները գրեթե նույնական են:

2.3 Առաջարկություններ

- 2.3.1 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտում ավելացնել նաև կենդանիների պաշտպանությունը:
- 2.3.2 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտից հանել ճառագայթման նպատակով կիրառվող սարքերը, հոսանքի հաշվիչները, կենցաղային օգտագործման վարդակները և խրոցները, ռադիո-էլեկտրական խանգարումների համար կիրառվող սարքերը, ինչպես նաև հատուկ պատվերով պատրաստված սարքերը, որոնք նախատեսված են մասնագետների կողմից հետազոտությունների և նորարական սարքավորման վրա կիրառելու համար:
- 2.3.3 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում կարելի է ավելացնել պահանջ, որով անդամ պետությունները չպետք է ստեղծեն արգելքներ սահմանված պահանջներին համապատասխանող արտադրանքի շուկայահանման համար:
- 2.3.4 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել տնտեսվարողին նույնականացնելուն վերաբերող պահանջը: Այս պահանջը հնարավորություն է տալիս ապահովել արտադրանքի սպառման ողջ կենսացիկլի հետևելիությունը՝ արտադրողից մինչև սպառում:
- 2.3.5 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի մեջ ավելացնել դրույթ, որը հնարավորություն կտա արտադրողին համապատասխանությունը սահմանված պահանջներին ապահովել նաև միջազգային ստանդարտներով, վերջիններիս բացակայության դեպքում նաև ազգային ստանդարտներով:
- 2.3.6 Պարզեցնել ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանված համապատասխանության գնահատմանը ներկայացվող պահանջները, մասնավորապես հանել սերտիֆիկացման պարտադիր պահանջը:
- 2.3.7 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանել տեխնիկական փաստաթղթերի փաթեթի մեջ ներառվող միասնական ցանկ:

2.3.8 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել շուկայի վերահսկողությանը ներկայացվող պահանջները, մասնավորապես.

- իրականացնել շուկայահանված արտադրանքի գնահատում՝ հիմնավոր կասկածների առկայության դեպքում,
- վերոնշյալ գնահատման արդյունքում ի հայտ եկած հնարավոր թերությունների մասին տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին և այլ անդամ պետություններին, եթե նշված արտադրանքը վաճառքը սահմանափակված չէ տվյալ երկրով,
- ձեռնարկված միջոցառումները վերլուծել և գնահատել:

2.3.9 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում նկարագրել սահմանված պահանջներին չհամապատասխանող արտադրանքի նկատմամբ ձեռնարկվող միջոցառումները:

2.3.10 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել միջոցառումների ընթացակարգ այն դեպքերի համար, երբ շուկայահանված, սահմանված պահանջներին համապատասխանող էլեկտրասարքավորումը վտանգ է ներկայացնում մարդկանց և կենդանիների առողջությանը:

2.3.11 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել անհամապատասխանությունների օրինակները, որոնք կարող են հիմք հանդիսանալ արտադրանքի շուկայահանումը սահմանափակելու համար:

2.3.12 ԵԱՏՄ տեխնիկական հրահանգում նախատեսել դրույթ, համաձայն որի պահանջները խախտողների համար կսահմանվեն պատժամիջոցներ:

3. Վառելիքին ներկայացվող պահանջների ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծությունը, առաջարկությունները և եզրակացությունը

3.1 Համեմատական վերլուծության արդյունքները

3.1.1 Վառելիքին ներկայացվող պահանջներին առնչվող ԵՄ հրահանգի և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի մանրամասն ուսումնասիրության ու համեմատության արդյունքները ներկայացված են համեմատական աղյուսակի տեսքով սույն հաշվետվության հավելված 2-ում:

3.1.2 ԵՄ հրահանգը սահմանում է պահանջներ՝ ավտոմեքենաներում, այլ տրանսպորտային միջոցներում (այդ թվում, ներքին ջրերում օգտագործվող ջրային տրանսպորտային միջոցների), գյուղատնտեսական ու անտառային տրակտորներում կիրառվող վառելիքի համար: ԵՄ հրահանգի պահանջները սահմանվում են հաշվի առնելով մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու նպատակով: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանում է պահանջներ վառելիքի նկատմամբ, նպատակ ունենալով մարդու կյանքի ու առողջության, գույքի, շրջակա միջավայրի պաշտպանության ապահովումը: Վերջինս չի մանրամասնում թե ինչ տեսակի տրանսպորտային միջոցներում կիրառվող վառելիքի վրա է տարածվում սահմանված պահանջները:

3.1.3 ԵՄ հրահանգը սահմանում է բնութագրիչներ ավտոմոբիլային բենզինի համար, որի օկտանային թիվը հետազոտական մեթոդով 95 է իսկ շարժիչային մեթոդով 85: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանում է բնութագրիչներ ավտոմոբիլային բենզինի համար, որի օկտանային թիվը հետազոտական մեթոդով 80-ից ոչ պակաս է, իսկ շարժիչային մեթոդով 76-ից ոչ պակաս:

Հաշվի առնելով վերոնշյալ տարբերությունը ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում բենզինի բնութագրիչների սահմանված ցուցանիշները տարբերվում են, միևնույն ժամանակ սահմանված են պահանջներ գրեթե նույն բնութագրիչների համար: Բացի այդ ԵՄ հրահանգում առկա է թորմանը առնչվող բնութագրիչ, որը բացակայում է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում:

ԵՄ հրահանգում սահմանված պահանջները համապատասխանում են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բերված վառելիքի Կ 5 դասին:

Օկտանային թվի ավելացման և ածխածնի մոնօքսիդի արտանետումների պակասեցման նպատակով՝ բենզինի մեջ համապատասխան քանակությամբ ավելացնում են օքսիդիչներ: ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերը սահմանում են ցուցանիշներ միևնույն օքսիդիչների համար: Սակայն ԵՄ հրահանգում հետևյալ օքսիդիչների ծավալը մեծ է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանված օքսիդիչների ծավալից. մեթանոլ 3 անգամ, էթանոլ 2 անգամ, իզոպրոպիլ սպիրտ 120%, եռարբուխիլ սպիրտ ավելի քան 2 անգամ, իզոբուխիլ սպիրտ 220% և այլ օքսիդիչներ 150%:

Մեկ այլ տարբերությունը դա բենզինում թթվածնի զանգվածային մասն է: ԵՄ հրահանգում այն կազմում է առավելագույնը 3,7%, իսկ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում առավելագույնը 2,7%: Թթվածնի պարունակությունից է կախված վառելիքի այրումը և վնասակար արտանետումների քանակը: Այս ցուցանիշը տարբեր երկրներում կախված տեխնոլոգիական զարգացումից և բնապահպանությանը ներկայացվող պահանջներից տարբերվում է: Թթվածնի զանգվածային մասի բարձր պարունակությունը ազդում է վառելիքի ծախսի և ավտոմեքենայի հզորության վրա, ինչը պայմանավորված է օքսիդիչների այրման ցածր ջերմաստիճանով: Հետևաբար, թթվածնի զանգվածային մասը բենզինում պետք է լինի 2.0 -ից - 2.7%: ԵՄ-ում նախկինում գործում էր 2.7% առավելագույն ցուցանիշը, սակայն բիովառելիքի լայն տարածման պայմաններում, որտեղ թթվածնի քանակը ավելի բարձր է քան առանց բիո խառնուրդի բենզինում, և ջերմոցային գազերի նվազեցման նպատակով՝ ԵՄ թթվածնի զանգվածային մասի թույլատրելի ցուցանիշը առավելագույնը սահմանվել է 3,7%:

3.1.4 ԵՄ հրահանգում դիզելային վառելիքին և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում Կ 5 դասի դիզելային վառելիքին ներկայացվող պահանջները համադրելի են: Բացառություն է կազմում ԵՄ հրահանգում առկա խտության բնութագրիչը, որը բացակայում է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում: Միևնույն ժամանակ վերջինիս մեջ սահմանված են այլ բնութագրիչներ, որոնք բացակայում են ԵՄ հրահանգում, ինչպես օրինակ բռնկման, պղտորման ջերմաստիճանի և մածուցիկության բնութագրիչները:

3.1.5 ԵՄ հրահանգում սահմանված են պահանջներ միայն բենզինի, դիզելային վառելիքի և բիովառելիքի համար, փաստաթղթում սահմանված չեն պահանջներ վառելիքի հետևյալ տեսակների համար. մագուր, ավիացիոն բենզին, ռեակտիվային շարժիչների և նավերի համար նախատեսված վառելիք: Բացի այդ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը նաև

սահմանում է, որ վառելիքի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի որակի փաստաթղթով (անձնագիր), ինչը բացակայում է ԵՄ հրահանգում:

- 3.1.6 ԵՄ հրահանգում բացակայում է առանձին բաժին շուկայահանման պահանջների նկարագրությամբ, այդ պահանջը ամրագրված է ԵՄ հրահանգի հոդված 3-ում բենզինի համար և հոդված 4-ում դիզելային վառելիքի համար: Ինչպես ԵՄ հրահանգում այնպես էլ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում չի թույլատրվում շուկայահանել վառելիք որը չի համապատասխանում սահմանված պահանջներին: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բերված է նաև ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի իրացման ժամանակ վաճառողի կողմից պարտադիր կերպով ներկայացվող տեղեկատվությունը: Ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի մակնիշի ներկայացման պահանջները բերված են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի Հավելված 1-ում: Ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ԵՄ հրահանգում վառելիքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացմանը առնչվող դրույթները բացակայում են:
- 3.1.7 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է ԵՄ հրահանգում առկա դրույթը, որը վերաբերում է նավթի կամ նավթամթերքի մատակարարման չնախատեսված փոփոխմանը: Նշված փոփոխությունը կարող է հանգեցնել վառելիքի բնութագրիչների համար սահմանված պահանջների չկատարմանը: ԵՄ հրահանգը այս իրավիճակում թույլ է տալիս վեց ամիս ժամանակով անդամ պետություններին բնութագրիչների համար սահմանել ավելի մեղմ պահանջներ:
- 3.1.8 ԵՄ հրահանգը շեշտադրում է կատարում ջերմոցային գազերի և բիովառելիքին առնչվող պահանջների վրա: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում են ջերմոցային գազերի և բիովառելիքին առնչվող դրույթներ:
- 3.1.9 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է անդամ պետություններին ներկայացվող մշտադիտարկման և հաշվետվության ներկայացման պահանջը: ԵՄ հրահանգով սահմանվում է, որ անդամ պետությունները պետք է ստեղծեն վառելիքի որակի մշտադիտարկման համակարգ, որպեսզի ապահովեն հոդված 3-ում բենզինի համար և հոդված 4 դիզելային վառելիքի համար սահմանված պահանջների կատարումը: Բացի այդ անդամ պետությունները պարտավոր են ամեն տարի ներկայացնել Եվրոպական հանձնաժողով հաշվետվություն իրենց երկրներում հրահանգի պահանջների կատարման, շուկայահանված վառելիքի ծավալների, ծծմբի և կապարի պարունակության մասին:
- 3.1.10 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է դրույթ մետաղական հավելումների վերաբերյալ: ԵՄ հրահանգում սահմանվում են պահանջներ մետաղական հավելումներ պարունակող վառելիքի մակնշման, ռիկերի գնահատման վերաբերյալ:
- 3.1.11 ԵՄ հրահանգում բացակայում է առանձին բաժին փորձարկման մեթոդների պահանջների նկարագրությամբ, այդ պահանջը ամրագրված է ԵՄ հրահանգի հոդված 3-ում բենզինի համար և հոդված 4 դիզելային վառելիքի համար: Նշված երկու հավելվածներում հղում է կատարվում Եվրոպական ստանդարտներում ամրագրված փորձարկման մեթոդներին: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը նույնպես փորձարկման մեթոդների մասին խոսելիս հղում է կատարում միջպետական ստանդարտներին:

3.1.12 ԵՄ հրահանգում բացակայում է համապատասխանության գնահատմանը առնչվող պահանջ: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանում է համապատասխանության հայտարարագրում, որպես համապատասխանության հավաստման ընթացակարգ: ԵՄ հրահանգում բացակայում է համապատասխանության գնահատմանը առնչվող պահանջ: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանում է համապատասխանության հայտարարագրում, որպես համապատասխանության հավաստման ընթացակարգ: Արտադրողի կողմից համապատասխանության հայտարարագրի ներկայացումը, առանց երրորդ կողմի պարտադիր մասնակցության, կիրառվում է այն դեպքերի համար երբ ռիսկի մակարդակը բարձր չէ: Երրորդ կողմի պարտադիր համապատասխանության գնահատման իրականացումը ԵՄ հրահանգներում բացառություն է կազմում: Սերտիֆիկացման օգտագործումը սահմանափակված է այն ապրանքային խմբերի համար, որոնք ունեն համեմատաբար բարձր ռիսկ, երբ նման լրացուցիչ վերահսկողությունը անհրաժեշտ է և արդարացված: Միևնույն ժամանակ պետք է նշել ԵՄ անդամ պետություններում շուկայի վերահսկողության զարգացած համակարգի մասին, մասնավորապես գործում են կենտրոնացված արագ արձագանքման համակարգը և միասնական օրենսդրությունը:

3.2 Եզրակացություններ

3.2.1 Վառելիքին ներկայացվող պահանջներին առնչվող ԵՄ հրահանգի և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի դեպքում պատկերը հետևյալն է՝ ԵՄ հրահանգը սահմանում է պահանջներ նշված տրանսպորտային միջոցներում կիրառվող վառելիքի համար: Ի տարբերություն ԵՄ հրահանգի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանում է պահանջներ վառելիքի տեսակների համար: Այս երկու փաստաթղթերում բերված պահանջները համադրելի են միայն բենզինի և դիզելային վառելիքի պարագայում: ԵՄ հրահանգը շեշտադրում է կատարում ջերմոցային գազերի և բիովառելիքին առնչվող պահանջների վրա: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում են ջերմոցային գազերի և բիովառելիքին առնչվող դրույթներ:

3.2.2 ԵՄ հրահանգում սահմանված պահանջները համապատասխանում են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բերված վառելիքի 4 5 դասին:

3.2.3 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում վառելիքի բնութագրիչների սահմանված ցուցանիշները տարբերվում են, միևնույն ժամանակ սահմանված են պահանջներ գրեթե նույն բնութագրիչների համար: Հիմնական տարբերությունը վերաբերվում է բենզինի մեջ օքսիդիչների համար սահմանված ցուցանիշներին: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բերված է օքսիդիչների ավելի ցածր պարունակության պահանջ, ինչը նպաստում է ածխածնի մոնօքսիդի արտանետումների ավելացմանը և օկտանային թվի նվազեցմանը:

3.2.4 ԵՄ հրահանգում բացակայում է համապատասխանության գնահատմանը առնչվող պահանջ: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանում է համապատասխանության հայտարարագրում որպես համապատասխանության հավաստման ընթացակարգ:

3.2.5 Ինչպես ԵՄ հրահանգում այնպես էլ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է միասնական նշանի կիրառման պահանջ՝ վառելիքի համար:

3.3 Առաջարկություններ

- 3.3.1 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել ջերմոցային գազերի և բիովառելիքին առնչվող դրույթներ: Բիովառելիքին ներկայացվող պահանջների սահմանումը պայմանավորված է տեխնոլոգիական առաջընթացով: Միջազգային հանրությունը Միացյալ Ազգերի հովանու ներքո սահմանել է ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նոր պարտավորություններ, ուստի անհրաժեշտ է հաշվի առնել ջերմոցային գազերի արտանետումների սահմանափակումները:
- 3.3.2 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտում ներառել այն տրանսպորտային միջոցների ցանկը, որոնց վրա տարածվում են կանոնակարգով սահմանված պահանջները:
- 3.3.3 Օկտանային թվի ավելացման և ածխածնի մոնօքսիդի արտանետումների պակասեցման նպատակով՝ ԵՄ հրահանգում բերված չափով, ավելացնել ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բերված բենզինի մեջ օքսիդիչների քանակը:
- 3.3.4 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել անդամ պետություններին ներկայացվող վառելիքի համապատասխանության մշտադիտարկման և հաշվետվության ներկայացման պահանջը:
- 3.3.5 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել դրույթ մետաղական հավելումներ պարունակող վառելիքի մակնշման, ռիսկերի գնահատման վերաբերյալ:
- 3.3.6 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերում վերանայել պարտադիր համապատասխանության գնահատման պահանջները: Սերտիֆիկացման օգտագործումը սահմանափակել այն ապրանքային խմբերի համար, որոնք ունեն համեմատաբար բարձր ռիսկ, երբ նման լրացուցիչ վերահսկողությունը անհրաժեշտ է և արդարացված: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է զարգացնել ԵԱՏՄ շուկայի վերահսկողության համակարգը՝ միասնական պահանջների սահմանման և արագ արձագանքման միջոցով:

4. Ծխախոտային արտադրանքի ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծությունը, առաջարկությունները և եզրակացությունը

4.1 Համեմատական վերլուծության արդյունքները

- 4.1.1 Ծխախոտային արտադրանքին ներկայացվող պահանջներին առնչվող ԵՄ հրահանգի և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի մանրամասն ուսումնասիրության ու համեմատության արդյունքները ներկայացված են համեմատական աղյուսակի տեսքով սույն հաշվետվության հավելված 3-ում:
- 4.1.2 Երկու փաստաթղթերում սահմանված պահանջները նպատակ ունեն ապահովել մարդկանց առողջության պաշտպանությունը և սահմանում են ծխախոտային արտադրանքի մակնշման և շուկայահանման պահանջները: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նպատակի մեջ նշում է նաև շրջակա միջավայրի պաշտպանությունը և սպառողներին մոլորության մեջ զգող գործողություններից նախազգուշացումը: Այս հոդվածում նաև նշված են ծխախոտային

արտադրանքի նմուշները, ԵԱՏՄ տարածքից արտահանվող և ծխելու համար չնախատեսված ծխախոտային արտադրանքը, որոնց վրա տվյալ տեխնիկական կանոնակարգը չի տարածվում: ԵՄ հրահանգում կիրառման ոլորտում նշվում է նաև ծամելու համար նախատեսված ծխախոտի շուկայահանելու արգելքը, ծխախոտային արտադրանքի միջսահմանային հեռահար վաճառքի մասին, նորարական ծխախոտի վերաբերյալ ծանուցման, ինչպես նաև էլեկտրական սիգարետների մասին:

4.1.3 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում արտանետումների քանակին ներկայացվող պահանջները նույնական են:

4.1.4 ԵՄ հրահանգը հղում է կատարում ԻՍՕ ստանդարտներին արտանետումների քանակը չափելու համար: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը հղում է կատարում ստանդարտների ցանկին, որը սովորաբար ընդունվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից, սակայն դեր այդ ցանկը հաստատված և հրապարակված չէ:

4.1.5 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերը ունեն արտադրողների կողմից համապատասխան մարմին հաշվետվություններ ներկայացնելու պահանջի դրույթ:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը ի տարբերություն ԵՄ հրահանգի պարտադրում է ներկայացնել ծխախոտային արտադրանքի բաղադրության և արտանետումների մասին հաշվետվությունները ամեն տարի՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանված կարգի: Բացի այդ նշված հաշվետվության մեջ անհրաժեշտ է նաև նշել իրականացված թունաբանական հետազոտությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

ԵՀ հրահանգը բացի ծխախոտային արտադրանքի բաղադրության, արտանետումների և թունաբանական տվյալների մասին հաշվետվությունների պահանջում է ներկայացնել նաև հաշվետվություն բաղադրության փոփոխության վերաբերյալ, որը պետք է ուղեկցվի յուրաքանչյուր տարրի ներառման հիմնավորմամբ: Բացի այդ նաև պահանջվում է ներկայացնել տեխնիկական փաստաթուղթ կիրառված հավելումների նկարագրությամբ:

4.1.6 Ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի, որտեղ նշված է ծխախոտային արտադրանքի մեջ արգելվող տարրերի ցանկը, ԵՄ հրահանգը չի նշում այդ արգելվող նյութերի անվանական ցանկը, այլ նկարագրում է թե ինչ տեսակ հավելումներ և նյութեր չի կարելի օգտագործել ծխախոտային արտադրանքի մեջ:

4.1.7 Ինչպես ԵՄ հրահանգը այնպես էլ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը մանրամասն նկարագրում են ծխախոտային արտադրանքի վրա նախազգուշացումների և պատկերների, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության առկայության ու արգելքների վերաբերյալ պահանջները: ԵՄ հրահանգում նշվում են առողջության նախազգուշացումների տեքստերը, համաձայն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի այդ նախազգուշացումների օրինակների հաստատումը պետք է կատարվի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից: ԵՄ հրահանգը մանրամասն նկարագրում է նախազգուշացումների չափսը և տեղակայման վայրը:

4.1.8 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է հետևելիության ապահովման վերաբերյալ պահանջ: ԵՄ հրահանգը մանրամասն նկարագրում է ծխախոտային արտադրանքի վրա փակցվող եզակի նունականացուցիչը, որը հնարավորություն է տալիս նույնականացնել՝

- Արտադրման վայրը և ամսաթիվը,
- Արտադրամասը
- Հաստոցը
- Հերթափոխը, որի ժամանակ արտադրվել է տվյալ տուփը
- Արտադրանքի նկարագիրը
- Վաճառքի համար նախատեսված շուկան
- Առաքման համար նախատեսված ուղին
- Որտեղ կհարուցվի է ԵՄ տարածք ներմուծողին:

Վերոնշյալ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս ապահովել հետևելիությունը և հեշտորեն նույնականացնել շուկայում հայտնված յուրաքանչյուր ծխախոտային արտադրանքը:

Բացի վերոնշյալից, ԵՄ հրահանգում ամրագրված է պահանջ, որպեսզի յուրաքանչյուր տնտեսվարող՝ արտադրողից սկսած մինչև առաջին մանրածախ վաճառքի կետ, գրանցում կատարի և պահպանի տվյալներ իրեն տիրապետության տակ հայտնված ծխախոտային արտադրանքի վերաբերյալ:

- 4.1.9 Ինչպես ԵՄ այնպես էլ ԵԱՏՄ փաստաթղթում ամրագրված է պահանջ, որ ծխախոտային արտադրանքի վրա պետք է փակցվի դրոշմապիտակ: ԵՄ հրահանգը այն անվանում է անվտանգության պիտակ, իսկ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը հատուկ դրոշմապիտակ:
- 4.1.10 Ի տարբերություն ԵՄ հրահանգի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է արգելք ծամելու կամ ծծելու համար նախատեսված ծխախոտների շուկայահանման համար: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտից հանված են ծխելու համար չնախատեսված ծխախոտները, որոնց թվին են դասվում նաև ծամելու կամ ծծելու համար նախատեսված ծխախոտները:
- 4.1.11 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանված չէ ծխախոտային արտադրանքի միջսահմանային հեռահար վաճառքին վերաբերող պահանջ: ԵՄ հրահանգով ծխախոտային արտադրանքի միջսահմանային հեռահար վաճառքը միանշանակ առգելված չէ, սակայն այն երկրների համար, որոնք չեն արգելել նմանատիպ առևտուրը սահմանվում են լրացուցիչ պահանջներ՝ տնտեսավարողներին ներկայացնելու համար:
- 4.1.12 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է նոր ծխախոտային արտադրանքի վերաբերյալ ծանուցելու պահանջը: ԵՄ փաստաթուղթը պահանջում է, որպեսզի արտադրողը և ներմուծողը շուկայահանումից 6 ամիս առաջ ծանուցեն անդամ պետության համապատասխան մարմինն նոր ծխախոտային արտադրանքի վերաբերյալ: Ծանուցման մեջ պետք է նշվի նոր ծխախոտային արտադրանքի մասնրամասն նկարագրությունը և օգտագործման հրահանգը, ինչպես նաև բաղադրությունը ու արտանետումների քանակը:
- 4.1.13 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է Էլեկտրոնային սիգարետներին վերաբերող պահանջը:
- 4.1.14 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է ծխելու համար նախատեսված խոտաբույսերին, ինչպես նաև այդ խոտաբույսերի բաղադրության վերաբերյալ տեղեկացնելու պահանջը:
- 4.1.15 Ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի, որտեղ նշվում է միայն չհամապատասխանող արտադրանքի շուկայահանման արգելքի մասին, ԵՄ հրահանգում

ամրագրված է ազատ տեղաշարժի պահանջը և յուրաքանչյուր անդամ պետության արգելքների սահմանն սահմանափակումների մասին:

- 4.1.16 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերը նշում են, որ ծխախոտային արտադրանքը կարող է շուկայահանվել միայն երբ այն համապատասխանում է սահմանված պահանջներին:
- 4.1.17 ԵՄ հրահանգում բացակայում են ծխախոտային արտադրանքի նույնականացման դրույթներ:
- 4.1.18 ԵՄ հրահանգում բացակայում է համապատասխանության գնահատման համակարգ: Այն միայն նախատեսում է ծխախոտային արտադրանքի արտանետումներում պարունակության չափագրում հաստատված լաբորատորիաների միջոցով: Յուրաքանչյուր անդամ պետություն հաստատել է նման լաբորատորիաների ցանկ, որոնք իրավունք ունեն կատարել փորձարկումներ տվյալ հրահանգի ապահովման համար:
- 4.1.19 ԵՄ հրահանգում ինչպես որ դա նկարագրված է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է պետական վերահսկողության նմանօրինակ համակարգ: Վերջինս նախատեսում է համապատասխանության հայտարարագրի գրանցում և պետության կողմից վերահսկողություն: Դրա փոխարեն ԵՄ հրահանգը նախատեսում է մշտադիտարկում, հետևելիության համակարգ և անվտանգության տարրեր:
- 4.1.20 ԵՄ հրահանգում բացակայում է միասնական նշանի կիրառման պահանջը:

4.2 Եզրակացություններ

- 4.2.1 Ծխախոտային արտադրանքին առնչվող երկու փաստաթղթերում սահմանված պահանջները նպատակ ունեն ապահովել մարդկանց առողջության պաշտպանությունը և սահմանում են ծխախոտային արտադրանքի շուկայահանման պահանջները:
- 4.2.2 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում արտանետումների քանակին ներկայացվող պահանջները նույնական են:
- 4.2.3 Ինչպես ԵՄ հրահանգը այնպես էլ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը մանրամասն նկարագրում են ծխախոտային արտադրանքի վրա նախազգուշացումների և պատկերների, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության առկայության ու արգելքների վերաբերյալ պահանջները:
- 4.2.4 Ի տարբերություն ԵՄ հրահանգի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է արգելք ծամելու կամ ծծելու համար նախատեսված ծխախոտների շուկայահանման համար:
- 4.2.5 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է Էլեկտրոնային սիգարետներին վերաբերող պահանջը, ուստի անհրաժեշտ է ավելացնել այս պահանջը կանոնակարգի մեջ:
- 4.2.6 ԵՄ հրահանգում բացակայում է համապատասխանության գնահատման համակարգը: Այն միայն նախատեսում է ծխախոտային արտադրանքի արտանետումներում պարունակության չափագրում հաստատված լաբորատորիաների միջոցով:
- 4.2.7 ԵՄ հրահանգում բացակայում է միասնական նշանի կիրառման պահանջը:

4.3 Առաջարկություններ

- 4.3.1 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում կարելի է ավելացնել ծամելու համար նախատեսված ծխախոտի շուկայահանելու արգելքը, ծխախոտային արտադրանքի միջսահմանային հեռահար վաճառքի մասին, նորարական ծխախոտի վերաբերյալ ծանուցման, ինչպես նաև էլեկտրոնային սիգարետների մասին դրույթներ:
- 4.3.2 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում կարելի է ավելացնել պահանջ համաձայն որի ներկայացնել նաև հաշվետվություն բաղադրության փոփոխության վերաբերյալ, որը պետք է ուղեկցվի յուրաքանչյուր տարրի ներառման հիմնավորմամբ, ինչպես նաև կիրառված հավելումների նկարագրությամբ տեխնիկական փաստաթղթով:
- 4.3.3 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում արգելված նյութերի ցանկին ավելացնել նաև այն նյութերի և դրանցից առաջացող վնասների նկարագրությունը, քանի որ ավելի բարդ է ներկայացնել հավելումների և նյութերի ցանկը, որոնք կարող են օգտագործվել ծխախոտային արտադրանքի մեջ:
- 4.3.4 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել ծխախոտային արտադրանքի հետևելիության ապահովման վերաբերյալ պահանջ, ինչը հնարավորություն կտա ապահովել հետևելիությունը և հեշտորեն նույնականացնել շուկայում հայտնված յուրաքանչյուր ծխախոտային արտադրանքը:
- 4.3.5 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել ծամելու կամ ծծելու համար նախատեսված ծխախոտների շուկայահանման արգելք:
- 4.3.6 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել ծխախոտային արտադրանքի միջ-սահմանային հեռահար վաճառքին վերաբերող դրույթներ՝ ինչը կկանոնակարգի ծխախոտային արտադրանքի առևտրի տվյալ տեսակը:
- 4.3.7 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել նոր ծխախոտային արտադրանքի վերաբերյալ ծանուցելու պահանջը:
- 4.3.8 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ներառել էլեկտրոնային սիգարետներին վերաբերող պահանջը:
- 4.3.9 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել ծխելու համար նախատեսված խոտաբույսերին և դրանց բաղադրության վերաբերյալ տեղեկացնելու պահանջը:
- 4.3.10 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ամրագրել ազատ տեղաշարժին առնչվող դրույթը և յուրաքանչյուր անդամ պետության արգելքների սահմանան սահմանափակումների մասին:

5. Մեքենա-մեխանիզմների անվտանգության ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծությունը, առաջարկությունները և եզրակացությունը

5.1 Համեմատական վերլուծության արդյունքները

5.2 Մեքենա-մեխանիզմների անվտանգության ԵՄ և ԵԱՏՄ կանոնակարգերի համեմատական վերլուծության արդյունքները

5.2.1 Մեքենա-մեխանիզմների անվտանգությանը առնչվող ԵՄ հրահանգի և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի մանրամասն ուսումնասիրության ու համեմատության արդյունքները ներկայացված են համեմատական աղյուսակի տեսքով՝ սույն հաշվետվության հավելված 4-ում:

5.2.2 ԵՄ հրահանգը նշում է այն մեքենաների տեսակները, որոնք ներառված են հրահանգի կիրառման ոլորտում, մասնավորապես՝

- մեքենաներ,
- փոխանակելի սարքավորում,
- անվտանգության բաղադրիչներ,
- ամբարձման պարագաներ,
- շղթաներ, և մետաղական պարաններ,
- շարժական մեխանիկական փոխանցման սարքեր,
- մասամբ ավարտված մեքենաներ:

Ի տարբերություն ԵՄ հրահանգի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտը հստակ չի նշում այն մեքենաների տեսակները, որոնց վրա այն տարածվում է: Փոխարենը տեխնիկական կանոնակարգի 1-ին հոդվածի 3-րդ կետը հղում է կատարում տեխնիկական կանոնակարգի հավելված 1-ին և 2-ին, որտեղ նշված են միայն հետևյալ տեսակները.

- գյուղատնտեսական և այլ ինքնագնաց մեքենաներ,
- ամբարձիչ մեքենաներ,
- պարենային ապրանքների մշակման և վերամշակման համար մեքենաներ, կոսմետիկայի կամ դեղերի արտադրության համար մեքենաներ:

ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերի կիրառման ոլորտից հանված են գրեթե նույն տեսակի մեքենաները: Սակայն առկա են որոշ տարբերություններ: ԵՄ հրահանգը ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի չի տարածվում հետևյալ մեքենաների և սարքերի վրա՝

- Անվտանգության մասեր, որոնք նախատեսված են օգտագործել որպես պահուստային մասեր,
- ուստիկանության և ռազմական նշանակության հատուկ նախագծված և պատրաստված մեքենաները,
- լաբորատորիաներում ժամանակավորապես օգտագործվող, հետազոտությունների իրականացման նպատակով նախագծված և պատրաստված մեքենաներ,
- բեմական ներկայացումների ժամանակ արտիստներին տեղափոխելու համար նախատեսված մեքենաներ,

- էլեկտրասարքավորում, որը կարգավորվում է ցածր լարման էլեկտրասարքավորման հրահանգով, մասնավորապես. կենցաղում օգտագործման համար նախատեսված կենցաղային տեխնիկա, տեսա և լսաձայնային սարքավորում, տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորում, սովորական գրասենյակային սարքավորում, ցածր լարման բաշխիչ կայաններ և կառավարման սարքեր, էլեկտրական շարժիչներ,
- բարձր լարման էլեկտրական սարքավորուման հետեյալ տեսակները. բաշխիչ կայաններ և կառավարման սարքեր, տրանսֆորմատորներ:

Միևնույն ժամանակ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը չի տարածվում՝

- ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործման և կապի ցանցերի ամբողջականության ու կայունության հետ կապված մեքենաների և (կամ) սարքավորումների,
- բժշկական նպատակներով օգտագործվող մեքենաների և (կամ) սարքավորումների, որոնք անմիջականորեն շփվում են հիվանդի հետ,
- ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց կողմից օգտագործվող մեքենաների և (կամ) սարքավորումների:

5.2.3 Երկու փաստաթղթում էլ կիրառման ոլորտից դուրս են բերվում այն մեքենաները, որոնցից առաջացող վտանգները կարգավորված են այլ փաստաթղթերով:

5.2.4 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերը կանոնակարգում են մարդկանց և տնային կենդանիների առողջությունը և անվտանգությունը, շրջակա միջավայրի պաշտպանության հարցերը, ինչպես նաև մարդկանց գույքի պաշտպանությունը:

5.2.5 ԵՄ հրահանգում նշվում է, որ անդամ պետությունները պետք է նշանակեն համապատասխան մարմին, որը պետք է մշտադիտարկի մեքենաների համապատասխանությունը սահմանված պահանջներին: Նմանատիպ դրույթ չկա ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում: Վերջինս նշում է պետական վերահսկողության մարմնի մասին:

5.2.6 ԵԱՏՄ և ԵՄ փաստաթղթերը, որպես շուկայահանման պայման են նշում սահմանված պահանջների բավարարումը և համապատասխանության հավաստման ընթացակարգի իրականացումը: ԵՄ հրահանգը մանրամասնում և առանձնացնում է շուկայահանման համար անհրաժեշտ քայլերը:

5.2.7 Ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի, որտեղ նշվում է միայն չհամապատասխանող արտադրանքի շուկայահանման արգելքի մասին, ԵՄ հրահանգում ամրագրված է ազատ տեղաշարժի պահանջը և յուրաքանչյուր անդամ պետության արգելքների սահմանման սահմանափակումների մասին:

5.2.8 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է ԵՄ հրահանգում ամրագրված դրույթը, ըստ որի Եվրոպական հանձնաժողովին վերապահվում է իրավունք.

- թարմացնել անվտանգության տարրերի ցանկը,
- սահմանել մեքենաների շուկայահանման արգելք՝ ներդաշնակեցված ստանդարտների հետ կապված վտանգի առաջացման դեպքում:

Այն պարագայում, երբ Եվրոպական հանձնաժողովը կամ ԵՄ անդամ պետությունը կարծում են, որ ներդաշնակեցված ստանդարտը լիարժեք չի բավարարում առողջության և անվտանգության պահանջները, ապա հարցը քննարկվում է հատուկ ընթացակարգով ստեղծված կոմիտեի կողմից: Վերջինիս կարծիքը հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովը որոշում է կայացնում տվյալ ներդաշնակեցված ստանդարտին հղումը հանելու կամ պահպանելու վերաբերյալ:

5.2.9 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ի տարբերություն ԵՄ հրահանգի, բացակայում է վերջինիս համապատասխանությունը ապահովող ստանդարտների հետ խնդիրներ առաջանալու դեպքում, դրանք վիճարկելու վերաբերյալ դրույթը:

5.2.10 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ինչպես որ և ԵՄ հրահանգում առկա է դրույթ սահմանված պահանջներին չհամապատասխանող մեքենաների շուկայահանման արգելքի կամ շուկայից դուրս բերման վերաբերյալ:

ԵՄ հրահանգում նշված է նաև անդամ պետությունների և Եվրոպական հանձնաժողովին առնչվող պարտավորությունները, որոնք բացակայում են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում:

5.2.11 ԵԱՏՄ և ԵՄ փաստաթղթերը ունեն համապատասխանության հավաստման նմանատիպ մոտեցում: Համապատասխանությունը ապահովվում է կամ սահմանված պահանջների իրականացմամբ, կամ նշված ստանդարտների կիրառմամբ:

5.2.12 ԵՄ հրահանգում մեքենաների համապատասխանության գնահատման համար գործում է մի քանի մոտեցում. մեքենաներ, որոնք ներառված են ԵՄ հրահանգի հավելված IV-ում բերված ցանկի մեջ և վերջինիս մեջ չներառված մեքենաներ: Այն մեքենաների համար, որոնք ներառված չեն վերոնշյալ ցանկի մեջ, արտադրողը կիրառում է ներքին ստուգման համապատասխանության գնահատման ընթացակարգը: Այն մեքենաների համար, որոնք ներառված են վերոնշյալ ցանկի մեջ և որոնք արտադրված են համաձայն ներդաշնակեցված ստանդարտների կիրառվում են՝ ներքին ստուգման համապատասխանության գնահատման ընթացակարգը, կամ տեսակի փորձաքննության և ներքին ստուգման ընթացակարգերը, կամ որակի ամբողջական հավաստման ընթացակարգը: Վերջապես, այն մեքենաների համար, որոնք ներառված են վերոնշյալ ցանկի մեջ և որոնք արտադրված չեն համաձայն ներդաշնակեցված ստանդարտների կիրառվում են՝ տեսակի փորձաքննության և ներքին ստուգման, կամ որակի ամբողջական հավաստման ընթացակարգը:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում նույնպես նախատեսվում է համապատասխանության գնահատման մի քանի մոտեցում, մասնավորապես համապատասխանության գնահատում համապատասխանության հայտարարագրի և սերտիֆիկացման միջոցով: Վերջինը բացակայում է ԵՄ հրահանգում:

Ի տարբերություն ԵՄ հրահանգի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը նախատեսում է նշված յուրաքանչյուր համապատասխանության գնահատման ընթացակարգի համար մեքենաների և սարքավորման առանձին ցանկ՝ մեկը համապատասխանության հայտարարագրման համար, մյուսը սերտիֆիկացման համար: Հետևաբար այն մեքենաները և սարքավորումը, որոնք չեն ընդգրկված վերոնշյալ երկու ցանկերում ենթակա չեն համապատասխանության գնահատման:

ԵՄ հրահանգում առկա է մեկ ցանկ և այդ ցանկում չներառված մեքենաները և սարքավորումը պետք է ենթարկվի համապատասխանության գնահատման:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում նշված մեքենաների և սարքավորման ցանկերը չեն համապատասխանում ԵԱՏՄ-ում կիրառվող Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին (ԱՏԳ ԱԱ):

- 5.2.13 ԵՄ հրահանգում բացակայում է համապատասխանության գնահատում՝ համապատասխանության սերտիֆիկատի միջոցով: Հրահանգում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգերից մեկը նախատեսում է տեսակի փորձաքննության սերտիֆիկատ, որը վերաբերում է մեքենայի նախագծմանը միայն, այն չի ենթադրում, որ արտադրանքը համապատասխանում է սահմանված պահանջներին: Ի տարբերություն ԵՄ հրահանգի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը նախատեսում է համապատասխանության սերտիֆիկատ այն մեքենաների համար որոնք բերված են տեխնիկական կանոնակարգի հավելված 3-ում:
- 5.2.14 ԵՄ հրահանգում նշված է մեքենաների և սարքավորման 23 տեսակներ, որոնց համար կիրառվում է համապատասխանության գնահատման ավելի խիստ ընթացակարգեր, ցանկում չներառված մեքենաների և սարքավորման համար կիրառվում է համապատասխանության գնահատման ավելի պարզ ընթացակարգ: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի հավելված 3-ում նշված է սերտիֆիկացման ենթակա մեքենաների և սարքավորման անվանացանկ, որը ներառում է 15 անվանում և համապատասխանության հայտարարագրման ենթակա 60 անվանում ներառող ցանկ: Այսպիսով ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը սահմանափակում է այն մեքենաների և սարքավորման անվանացանկը որի վրա տարածվում են սահմանված պահանջները:
- 5.2.15 Ինչպես ԵՄ հրահանգը այնպես էլ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը անդրադառնում են համապատասխանության հայտարարագրի բովանդակությանը և դրա հիմնավորման պահանջներին: Ի տարբերություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի, որտեղ ամրագրված է որ համապատասխանության հայտարարագրի օրինակը հաստատում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, ԵՄ հրահանգը սահմանում է համապատասխանության հայտարարագրում ներառվող տվյալների ցանկը: Բացի այդ քանի, որ ԵՄ հրահանգը սահմանում է պահանջներ նաև անավարտ մեքենաների համար, այն սահմանում է այդ տեսակ մեքենաների համար կազմվող համապատասխանության հայտարարագրի բովանդակությունը:
- 5.2.16 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերի մեկ այլ տարբերությունը նա է, որ չնայած նրա որ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ԵՄ հրահանգը նույնպես սահմանում է համապատասխանության հայտարարագրման մի քանի ընթացակարգ, սակայն ԵԱՏՄ փաստաթղթում յուրաքանչյուր ընթացակարգի համար սահմանվում են առանձին պահանջներ: ԵՄ հրահանգը սահմանում է միասնական պահանջներ այդ ընթացակարգերի համար, որտեղից արտադրողը ինքը պետք է ընտրի իր կողմից կիրառված ընթացակարգին վերաբերող և համապատասխանության հայտարարագրում ներառվող տվյալները:
- 5.2.17 Ի տարբերություն ԵՄ հրահանգի, ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է ծանուցված (նշանակված) մարմնի գործառույթները և նշանակման չափանիշները նկարագրող առանձնացված հոդված: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի 8-րդ հոդվածում նշվում է, որ

համապատասխանության գնահատումը պետք է կատարվի միասնական գրանցամատյանում ներառված մարմինների կողմից:

5.2.18 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում միասնական նշանին ներկայացվող պահանջները գրեթե նույնական են:

5.2.19 ԵՄ հրահանգում նախատեսված է պատժամիջոցների սահմանում այն տնտեսվարողների համար, որոնք կխախտեն հրահանգում սահմանված պահանջները: Լուրջ խախտումների համար նախատեսված է քրեական պատասխանատվություն: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում պատժամիջոցների սահմանում նախատեսված չէ:

5.2.20 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը ինչպես և ԵՄ հրահանգը նկարագրում են տեխնիկական փաստաթղթերի փաթեթում ներառված տվյալների ցանկը:

Նշված տեխնիկական փաստաթղթերի փաթեթը պետք է առնվազն ներառի

- մեքենայի պատրաստմանը առնչվող փաստաթղթերը,
- այն առողջության և անվտանգության պահանջները, որոնք կիրառելի են տվյալ մեքենայի համար,
- կիրառված ստանդարտները,
- համապատասխանության գնահատման արդյունքը,
- օգտագործողի հրահանգը,
- համապատասխանության հայտարարագիրը:

Չնայած առկա որոշ տարբերությունների տեխնիկական փաստաթղթերի փաթեթում ներառված տվյալների ցանկը նույնական է:

5.2.21 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է անավարտ մեքենաներին առնչվող դրույթներ: ԵՄ հրահանգը սահմանում է պահանջներ անավարտ մեքենաների դրանց հավաքման հրահանգների, ինչպես նաև պահանջներ տեխնիկական փաստաթղթերի փաթեթի նկատմամբ:

5.2.22 Անվտանգության պահանջները պետք է հիմնված լինեն ռիսկերի գնահատման վրա համաձայն ԻՍՕ 12100 ստանդարտի: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի 4-րդ և 5-րդ հոդվածները, ինչպես նաև հավելված 1-ը և 2-ը սահմանում են առողջությանը և անվտանգությանը առնչվող պահանջներ: ԵՄ հրահանգի առողջությանը և անվտանգությանը առնչվող պահանջները սահմանված են հավելված 1-ում և լրացուցիչ պահանջները հավելված 2-ում:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի հավելված 1-ը ունի 70 պահանջ, որոնք գրեթե նույնությամբ ներկա են ԵՄ հրահանգում: Մինչև նույն ժամանակ պետք է նշել, որ ԵՄ հրահանգում սահմանված պահանջները ավելի շատ են և ներառում են այնպիսի պահանջներ ինչպես օրինակ. մեքենայի օպերատորի նստարանին ներկայացվող պահանջները, կայծակից պաշտպանվելու, պահանջը, առանձին պահանջ մակնշման վերաբերյալ, ինչը տարբեր է միասնական նշանից:

Ինչ վերաբերվում է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի հավելված 2-ում ամրագրված թվով 60 պահանջներին, որոնցից 54 վերաբերվում են՝ Գյուղատնտեսական և այլ ինքնաշարժ ու շարժական, ինչպես նաև բեռնաբարձ մեքենաներին, ապա դրանք ոչ ամբողջովին են

համապատասխանում ԵՄ հրահանգում սահմանված պահանջներին: Տարբերությունը հիմնականում կայանում է նրանում, որ ԵՄ հրահանգում պահանջները ավելի շատ են, դրանք բաժանված են ըստ խմբերի և նկարագրում են յուրաքանչյուր խմբին պատկանող մեքենաների առանձնահատկությունները: Մնացած 6 պահանջը վերաբերվում են՝ սննդամթերքի մշակման ու վերամշակման, կոսմետիկ միջոցների կամ դեղագործական պատրաստուկների արտադրության համար նախատեսված սարքավորմանը: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանված պահանջները գրեթե նույնական են ԵՄ հրահանգում սահմանված պահանջներին:

5.3 Եզրակացություններ

- 5.3.1 Մեքենաների անվտանգության հետ կապված, ի տարբերություն ԵՄ հրահանգի, ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտը հստակ չի նշում այն մեքենաների տեսակները, որոնց վրա այն տարածվում է: Անհրաժեշտ է հստակեցնել մեքենաների տեսակները:
- 5.3.2 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում նշված մեքենաների և սարքավորման ցանկերը չեն համապատասխանում ԵԱՏՄ-ում կիրառվող Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին (ԱՏԳ ԱԱ): Անհրաժեշտ է համապատասխանեցնել մեքենաների անվանացանկերը:
- 5.3.3 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի հավելված 1-ը ունի 70 պահանջ, որոնք գրեթե նույնությամբ ներկա են ԵՄ հրահանգում: Ինչ վերաբերվում է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի հավելված 2-ում ամրագրված թվով 60 պահանջներին, ապա դրանք ոչ ամբողջովին են համապատասխանում ԵՄ հրահանգում սահմանված պահանջներին: Չնայած նշված տարբերության ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանված պահանջները գրեթե նույնական են ԵՄ հրահանգում սահմանված պահանջներին: ԵՄ հրահանգում պահանջները ավելի շատ են, դրանք բաժանված են ըստ խմբերի և նկարագրում են յուրաքանչյուր խմբին պատկանող մեքենաների առանձնահատկությունները:
- 5.3.4 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում բացակայում է անավարտ մեքենաներին առնչվող դրույթներ: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում նախատեսվում է համապատասխանության գնահատման մի քանի մոտեցում, մասնավորապես համապատասխանության գնահատում համապատասխանության հայտարարագրի և սերտիֆիկացման միջոցով: ԵՄ հրահանգում բացակայում է համապատասխանության գնահատում՝ համապատասխանության սերտիֆիկատի միջոցով:
- 5.3.5 Առաջարկվում է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանել առավել ռիսկ ներկայացնող մեքենաների ցանկ, որոնց համար որոշել համապատասխանության գնահատման համապատասխան ընթացակարգ, իսկ մյուս բոլոր մեքենաների համար, որոնք չեն ներառվել նշված ցանկում սահմանել համապատասխանության հայտարարագրում:
- 5.3.6 ԵՄ և ԵԱՏՄ փաստաթղթերում միասնական նշանին ներկայացվող պահանջները գրեթե նույնական են:

5.4 Առաջարկություններ

5.4.1 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտը հստակեցնել և նշել այն մեքենաների ցանկը, որոնց վրա տարածվում է տեխնիկական կանոնակարգը:

5.4.2 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում կարելի է ավելացնել պահանջ, որպեսզի անդամ պետությունները չստեղծեն արգելքներ սահմանված պահանջներն համապատասխանող արտադրանքի շուկայահանման համար:

5.4.3 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել դրույթ, ըստ որի Եվրասիական տնտեսական հանձնաժողովին վերապահվում է իրավունք.

- թարմացնել անվտանգության տարրերի ցանկը,
- սահմանել մեքենաների շուկայանման արգելք՝ հրապարակված ստանդարտների հետ կապված վտանգի առաջացման դեպքում:

5.4.4 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում նշված մեքենաների ցանկերը համապատասխանեցնել ԵԱՏՄ-ում գործող ԱՏԳ ԱԱ անվանացանկին:

Խմբագրել ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի համապատասխանության հայտարարագրի ենթակա մեքենաների և սարքավորման ցանկը՝ մեքենաների և սարքավորման ներառումը կատարել դիսկի գնահատման հիման վրա, ինչպես նաև սահմանել դրույթ, համաձայն որի ցանկում չընդգրկված մյուս մեքենաները և սարքավորումը նույնպես ենթակա են համապատասխանության գնահատման:

Խնդիրը պարզեցնելու նպատակով առաջարկվում է ԵՄ հրահանգի օրինակով սահմանել մեքենաների և սարքավորման խմբերը, որոնց վրա տարածվում են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի պահանջները:

5.4.5 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանել առավել դիսկ ներկայացնող մեքենաների ցանկ, որոնց համար սահմանել համապատասխանության գնահատման համապատասխան ընթացակարգ, իսկ մյուս բոլոր մեքենաների համար, որոնք չեն ներառվել նշված ցանկում սահմանել համապատասխանության հայտարարագրում:

5.4.6 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում ավելացնել դրույթ անավարտ մեքենաների վերաբերյալ:

5.4.7 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանել պատժամիջոցների վերաբերյալ դրույթ՝ սահմանված պահանջները խախտողների համար, իսկ լուրջ խախտումների համար նախատեսել քրեական պատասխանատվություն:

5.4.8 Անվտանգության պահանջները պետք է հիմնված լինեն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի դիսկերի գնահատման վրա համաձայն ԻՍՕ 12100 ստանդարտի: Ցանկալի է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում պահանջները խմբավորել ըստ դրանց նշանակության, ինչպես որ դա արված է ԵՄ հրահանգում: